Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Ժենյա Վազգենի Հովհաննիսյանի /ծնված՝ 1948 թվականի հունվարի 22-ին, Ավետիսյան փողոց 23 տուն/ 2022 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի «Կոճոռ թաղամաս» լիազոր ներկայացուցչի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 11-ին տրված տեղեկանքը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսների հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022 LNKYZX ծածկագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վերականգնել Հրազդան քաղաքի Միքայել Ավետիսյան փողոց թիվ 23 տան բնակիչ Ժենյա Վազգենի Հովհաննիսյանին պատկանող 400.0 քմ մակերեսով հողամասի և նրա վրա ինքնակամ կառուցված 439.28 քմ արտաքին մակերեսով բնակելի տան, ինքնակամ

կառուցված 15.87 քմ մակերեսով ծածկարանի, ինքնակամ կառուցված 3.76քմ մակերեսով պարսպի սեփականության իրավունքը:

2.Վերականգնել Հրազդան քաղաքի Միքայել Ավետիսյան փողոց թիվ 23 հասցեում գտնվող Ժենյա Վազգենի Հովհաննիսյանին պատկանող 400.0 քմ մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Ժենյա Վազգենի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը:

3.Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված պարիսպը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:

4.Համաձայն Կառավարության 2006 թվականի 18-ի թիվ 912 որոշման՝ սույն որոշման ընդունման օրվանից բնակելի տան ինքնակամ կառուցված 15.87 քմ արտաքին մակերեսով ծածկարանի օրինականացման համար սահմանված 31250 / երեսուն մեկ հազար երկու հարյուր հիսուն / դրամ գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Հողամասի սահմանները որոշվում են ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

7. Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված ծածկարանը, ինքնակամ կառուցված պարիսպը և այդ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված հողամասը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

8. Ժենյա Վազգենի Հովհաննիսյանին պատկանող բնակելի տանը, պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Միքայել Ավետիսյան փողոց թիվ 23 :

9.Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Ժենյա Վազգենի Հովհաննիսյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

10.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

11.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

14 հոկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 937

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՌՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի 28-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեի ծախսային մասում՝ 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 «Օրենսդիր, գործադիր մարմնի պահպանում» ծրագրի 4235 «Կառավարչական ծառայություններ» հոդվածում «3950.0» թիվը փոխարինել «3800.0» թվով, 4234 «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածում «520.0» թիվը փոխարինել «670.0» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



17 հոկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 938

**«ԿԵԶԱՌՔ» ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N135 որոշման հավելվածը և 2022 թվականի հոկտեմբերի 6-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N1 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց 203/1 հասցեում գտնվող 07-001-0511-0052 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.17656 հա մակերեսով հողամասը 6 900 000 (վեց միլիոն ինը հարյուր հազար) դրամ արժեքով օտարել «ԿԵԶԱՌՔ» բաց բաժնետիրական ընկերությանը (իրավաբանական հասցեն՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 47):
2. Աճուրդով ձեռք բերված 0.17656 հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
3. Պարտավորեցնել «ԿԵԶԱՌՔ» բաց բաժնետիրական ընկերությանը շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 հոկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 939

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 170 որոշումը, Հրազդան համայնքի Կոճոռ բնակավայրի Երևան-Սևան 17/1 տան բնակչուհի Ալիսա Մեհրաբյանի 2022 թվականի սեպտեմբերի 28-ի Դ-395 դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի «Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում 10.07.01.51 ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից 50 000 /հիսուն հազար/ դրամ գումար տրամադրել Հրազդան համայնքի Կոճոռ բնակավայրի Երևան-Սևան 17/1 տան բնակչուհի Ալիսա Մեհրաբյանին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 հոկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 940

ՄԻԱԿՈՐՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Վլադիմիր Սարուխանյանի 2022 թվականի հոկտեմբերի 14-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ա.Խաչատրյան փողոցի 27 շենքի թիվ 4 բնակարանի բնակիչ Վլադիմիր Սարուխանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 13102022-07-0029, գաղտնաբառ՝ E7MEBXZLJN6I և N 131020022-07-0012, գաղտնաբառ՝ LAA3B1ZK8FBK) Հրազդան քաղաքի Ա.Խաչատրյան փողոցի 27 շենքի 4/1 և 4 հասցեներում գտնվող միավորված բնակարանին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Ա.Խաչատրյան փողոց, 27 շենք, 4 բնակարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 հոկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 941

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Էդիկ Մարտիրոսյանի լիազորված անձ Ռաֆիկ Մարտիրոսյանի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Սոլակ գյուղի 8 թաղամասի թիվ 14 տան բնակիչ Էդիկ Մարտիրոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1319993, տրված՝ 2004 թվականի ապրիլի 30-ին) Կոտայքի մարզի Սոլակ գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սոլակ, 8-րդ թաղամաս 14:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



17 հոկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022 թվականի N 942

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ
ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Գոռ Իսրայելյանի 2021 թվականի դեկտեմբեր 10-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի հուլիսի 4-ի թիվ 39 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի հոկտեմբերի 10-ի N1627 գրավոր առաջարկությունը և Գոռ Իսրայելյանի կողմից տրված 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 869 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամաս 210/11 հասցեում գտնվող՝ 20.3քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 210/11 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 20.3քմ մակերեսով ավտոտնակը՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29082022-07-0107, գաղտնաբառ՝ CHZ1UB2P3AKA/ գինը սահմանել 34000 /երեսունչորս հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 20.3քմ մակերեսով հողամասը 59000 /հիսունինը հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 239 շենքի թիվ 14 բնակարանի բնակիչ Գոռ Իսրայելյանին (այսուհետ գնորդ):
3. Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը՝

900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 հոկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 943

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ
ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՋՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Անահիտ Եփրեմյանի 2021 թվականի դեկտեմբեր 7-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի հուլիսի 4-ի թիվ 29 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի հոկտեմբերի 10-ի N1628 գրավոր առաջարկությունը և Անահիտ Եփրեմյանի լիազորված անձ Գեղամ Սարգսյանի կողմից տրված 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 868 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 243/2 հասցեում գտնվող՝ 42.4քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 243/2 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 42.4քմ մակերեսով ավտոտնակը՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02092022-07-0033, գաղտնաբառ՝ QBJCNAZ6DPVP/ գինը սահմանել 71000 /յոթանասունմեկ հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 42.4քմ մակերեսով հողամասը 123000 /մեկ հարյուր քսաներեք հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 243 շենքի թիվ 1-2 բնակարանի բնակիչ Անահիտ Եփրեմյանին (այսուհետ գնորդ):
3. Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում

որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը՝ 900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 հոկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 944

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԵՎ
ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Ռաֆիկ Ղազարյանի 2022 թվականի մայիսի 25-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի հուլիսի 4-ի թիվ 34 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի հոկտեմբերի 10-ի N 1629 գրավոր առաջարկությունը և Ռաֆիկ Ղազարյանի կողմից տրված 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 870 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Հարավային թաղամասի Մ.Ավետիսյան փողոց 117/2 հասցեում գտնվող՝ 8.14քմ մակերեսով առևտրի սրահը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Մ.Ավետիսյան փողոց 117/2 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 8.14քմ մակերեսով առևտրի սրահը՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24082022-07-0094, գաղտնաբառ՝ BH2T4VPSUTKY/ գինը սահմանել 123000 /մեկ հարյուր քսաներեք հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող առևտրի սրահի համար առանձնացված 8.14քմ մակերեսով հողամասը 24000 /քսանչորս հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 155 տան բնակիչ Ռաֆիկ Ղազարյանին (այսուհետ գնորդ):
3. Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում

որոշման 2-րդ կետով առևտրի սրահի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը՝ 900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



17 հոկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Ասիմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 945

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 22-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Ժուտեքս Սուրիկի Հակոբյանի 2022 թվականի հոկտեմբերի 13-ի դիմումը, «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ Կոտայքի Մարզային մասնաճյուղի կողմից տրված արխիվային քաղվածքը՝ Հրազդանի քաղխորհրդի գործկոմի 1991 թվականի հուլիսի 26-ի նիստի թիվ 6 արձանագրության 28/1 կետից, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսների հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022NJVW22 ծածկագիրը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ժուտեքս Սուրիկի Հակոբյանին պատկանող Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող տնտեսական շինությանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս, Տիգրան Մեծի փողոց թիվ 25/5:
2. Օրինական ճանաչել Ժուտեքս Սուրիկի Հակոբյանին պատկանող Հրազդան քաղաքի Տիգրան Մեծի փողոց թիվ 25/5 հասցեում գտնվող 400.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 33.25 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը:
3. Հողամասի սահմանները որոշվում են ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4. Ինքնակամ կառուցված տնտեսական շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի

մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:
5.Ինքնակամ կառուցված տնտեսական շինության պահպանումը չի խախտում այլ
անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում
քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային
օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ
քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում
հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել
Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և
հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



17 հոկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 946

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով «ԽՄՈՐԻԶ ԱԼՐԱՂԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Լ. Հովհաննիսյանի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող «ԽՄՈՐԻԶ ԱԼՐԱՂԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Սոլակ գյուղի 1-ին փողոց 57/1 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից արտադրական հողամասում (սեփականության իրավունքի վկայական N 2647390, տրված՝ 2009 թվականի նոյեմբերի 16-ին) արտադրամաս կառուցելու համար՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

17 հոկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 106 17 հոկտեմբեր 2022թ

Տրված է
կառուցապատող

«ԽՄՈՐԻՉ ԱԼՐԱՂԱՑ» ՍՊԸ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, գ.
Սոլակ

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը)

Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, գյուղ Սոլակ, 1-ին փողոց 57/1 հասցեում

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Արտադրամասի, միջինից բարձր ուսկայնության աստիճանի (III կարեգորիա), .
(26.0x12.6մ հալարակազմային չափերի միահարկ շինություն)

օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ուսկայնության աստիճանը (կարեգորիան), հակիրճ քննարկումը, հիմնական ցուցանիշները)

կառուցում

շինարարական աշխատանքների կատարման, այդ
թվում՝

(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման,
ուղղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի
վրա նշված ոչ հիմնական կառույցների

տեղադրման
համար:

(նշվում են ոչ հիմնական
կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային
փաստաթղթերը՝
1)մշակվել են

„ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ„ ՍՊԸ

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի
անվանումը)

Արտոնագիր ՃԲԴ-Ա-085, ԿԵԴ-Ա2-007

կողմից,

(իջենցիայի համարը)

2)ստացել է (են) 23/09/2022 թ. N 252/22 փորձագիտական դրական եզրակացությունը

(եզրակացությունները)

պարզ

(նշել փորձաքննության տեսակը)

«ԾԱՄՁՈՐ» ՍՊԸ ՔՊԼ 17744

կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, (իջենցիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու
կապալառուի երաշխավորագիրը՝

թ. N

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի
երաշխավորության պայմանագրի համարը)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու
մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ
մարմինների

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐՈՆ
17.10.2022

հետ:

(նշել մարմինների անվանումները և
համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն
իրականացնել

17 հոկտեմբեր 2022 - 17 հոկտեմբեր
2024

ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տնօրոշումը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն

ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1.Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

3.Շինարարության վարման մատյանը բաղկացած է 82 էջից, կարված և դրոշմակնքված է Հրազդանի համայնքապետարանի կողմից:

4.Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի

և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների

հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5.Հատուկ պայմաններ՝

1)Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2)Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3)(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6.(լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների)

քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ջրցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին)

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7.Այլ պայմաններ

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8.Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9.Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022 թվականի N 947

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով Հակոբ Զարգարյանի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող Հակոբ Զարգարյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի Ամառային փողոց 1 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 19082022-07-0054, գաղտնաբառ՝ TWKAPTFHYA5D) բնակելի տան և ցանկապատի կառուցման համար՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



17 հոկտեմբերի 2022 թ.
ք. Հրազդան

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 105 17 հոկտեմբեր 2022թ

Տրված է
կառուցապատող

ՀԱԿՈՐ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ, ՀՀ, ԿՈՏԱՅՔ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.
ՀՐԱԶԴԱՆ, Կենտրոն, 5, 17

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը)

Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս Ամառային փողոց 1 հասցեում

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Քնակելի տան և ցանկապարի, միջին ուսկայնության աստիճանի (II
կապեզորիա), , Երկհարկանի շինություն՝ կիսանկուղային հարկով

օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ուսկայնության աստիճանը (կասեզորիան), հակիրճ քուրագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցում

շինարարական աշխատանքների կատարման, այդ
թվում՝

(նոր կառուցման, վերակառուցման, վերանորոգման,
ուղղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի
վրա նշված ոչ հիմնական կառույցների

տեղադրման
համար:

(նշվում են ոչ հիմնական
կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային
փաստաթղթերը՝
1) մշակվել են

աշխատանքային նախագիծ „ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ“,
ՍՊԸ

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի
անվանումը)

ՃՐԴ-Ա-085, ԿԵԴ-Ա2-007

կողմից,

(իցենզիայի համարը)

2) ստացել է (են) թ. N փորձագիտական դրական եզրակացությունը

(եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, իցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու
կապալառուի երաշխավորագիրը՝

07/10/2022 թ. N 588/22

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի
երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու
մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ,
17.10.2022

հետ:

(նշել մարմինների անվանումները և
համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն
իրականացնել

17 հոկտեմբեր 2022 - 17 հոկտեմբեր
2024

ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տեղադրությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն
ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 82 էջից, կարված և դրոշմակնքված է Հրազդանի համայնքապետարանի կողմից:

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի

և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների

հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ:

2) Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստական, հորային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքները)

6. (լրացվում է N 1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների)

քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին)

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2022թվականի N 948

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով Ավիս Սարգսյանի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող Ավիս Սարգսյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոցի 3/3 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 12012021-07-0102, գաղտնաբառ՝ SRBPFKANPVNU) առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի կառուցման համար՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



17 հոկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅԷԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 107 17 հոկտեմբեր 2022թ

Տրված է
կառուցապատող

ԱՎԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՀՀ, ԿՈՏԱՅԷ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.
ՀՐԱԶԴԱՆ, Մ. Բաղրամյան 8 Փ. , 15

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը)

Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, քաղաք Հրազդան, Միկրոշրջան
թաղամաս, 3-րդ փողոց թիվ 3/3

հասցեում

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի, միջինից բարձր
ռիսկայնության աստիճանի (III կարգեզորի), , բազմանկյուն երկհարկանի
շինություն

օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակված քնուկազիլը, հիմնական ցուցանիշները)

կառուցում

շինարարական աշխատանքների կատարման, այդ
թվում՝

(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման,
ուղղղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի
վրա նշված ոչ հիմնական կառույցների

տեղադրման
համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների
անվանումները)

1.Օբյեկտի նախագծային
փաստաթղթերը՝
1)մշակվել են

„ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ„ ՍՊԸ

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի
անվանումը)

Արտոնագիր ԾԲԴ-Ա-085, ԿԵԴ-Ա2-007

կողմից,

(իջեռագրայի համարը)

2)ստացել է (են) 02/09/2022 թ. N 221/22 փորձագիտական դրական եզրակացությունը

(եզրակացությունները)

պարզ

(նշել փորձաքննության տեսակը)

«ԾԱՄՁՈՐ» ՍՊԸ 17744

կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, (իջեռագրայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու
կապալառուի երաշխավորագիրը՝

թ. N

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի
երաշխավորության պայմանագրի համարը)

3)սահմանված կարգով համաձայնեցվել է՝ իրավասու

մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

հետ:

(նշել մարմինների անվանումները և
համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն
իրականացնել

17 հոկտեմբեր 2022 - 17 հոկտեմբեր
2024

ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տեղեկությունը)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 82 էջից, կարված և դրոշմակնքված է Հրազդանի համայնքապետարանի կողմից:

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի

և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների

հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ:

2) Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքները)

6. (լրացվում է N 1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

պահակակետը և պահեստը՝ 2.6քմ և 7.56քմ միահարկ

(շինությունների) **շինություններ**

քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին)

N 12012021-07-0102,

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորոգման-տեխնիկական պահանջներին համապատասխան:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հոկտեմբերի 2022 թվականի N 949

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ
ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՋՆԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Պարզև Հարությունյանի 2022 թվականի փետրվարի 11-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի հուլիսի 4-ի թիվ 31 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի հոկտեմբերի 10-ի N1626 գրավոր առաջարկությունը և Պարզև Հարությունյանի կողմից տրված 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 862 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

